ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՆԴԻՐԸ։

Միքանի տարուց ի վեր Երուսաղէմի խառնակ վիճակը զբաղեցնում է մամուլը, Ազգային ժողովը իւր պատրիարքով և Տաճկահայ ժողովրդի որոշ մասին։ Դժբախտաբար մինչև այժմ իւր լուծումն չստացաւ Սաղիմական կնճռոտ խնդիրը։ Վերջերս, երկար ձգձգումից յետոյ, Պոլսի Ազգային ժողովի կողմից մի պատգամաւորութիւն, նախագահութեամբ Օրմանեան Արքեպիսկոպոսի, ճանապարհուեց Երուսաղէմ խաղաղացնելու միաբանութիւնը, կարգի բերելու վանքի խառնակ վիճակը և Ազգային ժողովի կողմից նոր մշակուած կանոնադրութիւնը գործադրութեան տալու և կատարելով նաև Պատրիարքական ընտրութիւն։ Միաբանութիւնը միանգամայն հակառակ է նոր կանոնագրի գործադրութեան, այլ պահանջում է նախ Պատրիարքի ընտրութիւն Երուսաղէմի թափուր պատրիարքական գահի համար, և ապա թէ Պատրիարքի հաւանութեամբ նոր կանոնագիրը գործադրուի։

Ներկայումս Երուսաղէմի վանքը 30,000 ոսկուց աւելի տոկոսաւոր պարտքի տակ հեծում է։ Դժբախտաբար միաբանութիւնը մինչև այժմ չկարողացաւ կարգի բերել իւր տնտեսութիւնը և գտնէ շրջակայ հայ ժողովրդի զաւակների կրթութեան համար ունենալ փոքր ինչ վայելուչ դպրոցական հաստատութիւն։ Վանքը հեռու է միանգամայն մտաւոր աշխատանքով զբաղուելու կենարան կոչուելուց, և միաբանութիւնը կեանք է վարում իր նուիրական կոչման չծառայելով։ Տեղական հայերից Տիարք Սրապիոն և Ֆրէտէրիք Մուրատեան եղբայրներ առանձին ուշադրութեամբ են վերաբերուում դէպի Երուսաղէմի ներկայ վիճակը և իրենց բարձրագոյն դիրքով ու պատասխանատուութեամբ աշխատում են նպաստել վանքի ներկայ գրութեան բարելաւման։ Յարգելի Սրապիոնը՝ օտար հիւպատոսարանների մէջ պատուաւոր պաշտօններ է վարել, իսկ պ. Ֆրէ-

տէրիք Մուրատեանը Գերմանիոյ աստուածաբանական համալսարանը աւարտած ու յարգուած պրոֆեսսոր է։ Յարգելի աստուածաբան Տրէտէրիք Մուրատեանը Ազգային Սահմանադրութիւնն և Երուսաղէմի 88-ի կանոնագիրը ուսումնասիրելով՝ պատրաստել է մի աշխատութիւն որի մի պատճէնը Երուսաղէմի նախկին Տեղապահ Տ. Դանիէլ Արքեպիսկոպոսն ուղարկել է Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսին։ Հարկ համարեցինք այստեղ բերել այդ կարևոր աշխատութիւնն ամբողջութեամբ՝ ծանօթացնելու Արարատի ընթերցողներին Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան եղանակին վերաբերեալ խնդիրներին։

Բ. վ. Ա.

Դիտողութիւնք ինչ ի խնդիր ընտրութեան պատրիարքին Առաքելական Աթոռոյ Ս Յակովբեանց յԵրուսաղէմ

Ա.

Պատրիարքն Առաքելական Աթոռոյ Երուսաղէմի Գահակալ Պետն է Միաբանական Ուխտին ս. Յակովբեանց, միանգամայն Առաջնորդ Պատրիարքական վիճակին Երուսաղէմի Հոգևոր Հովուապետ Հայ ժողովրդոց բնակելոց ի սահմանս իւրոյ վիճակին, որ կը բովանդակէ, բաց ի մայրաքաղաքէն Երուսաղեմէ, զԹեմս Բեթղեհեմի, Յոպպէի, Բեերսաբէ և Դամասկոսի, որք առանձին առանձին տեսչութիւնք, կամ՝ որ նոյնն է՝ եպիսկոպոսական թեմք են, թէպէտև ըստ կանխակալ իմն սովորութեան յայժմուս սոսկ միաբան վարդապետք կը վարեն անդէն զպաշտօն հովուական։ Այսչափ է միայն յարդի ժամանակիս Երուսաղէմի Պատրիարքի իշխանութեան չրջանակն, այլ սակայն երբեմն նաև ի վերայ Եգիպտոսի և Կիպրոս կղզւոյն կը տարածանէր իւր իշխանութիւնն։ Իսկ վասն բազմապատիկ առաւելութեանց Ս. Քաղաքին և անհամեմատ պատուականութեան նորին, Պատրիարքն Երուսաղէմի կը վայելէ մեծամեծ իմն ճոխութիւն և պատիւս երևելիս ըստ կարգի եկեղեցական նուիրապետութիւն, որպէս և յիրս քաղաքային։

Միաբանութիւն Ս. Յակովբեանց, որ՝ յանուն Հայ Ազգին՝ ի Ս. Տեղիս Հայոց առանձինն իրաւանց և ստացուածոց պահպանութեան պաշտօնն կը կատարէ,—վասն զի յայտ իմն է՝ թէ այս ամենայն իրաւանց և ստացուածոց Տէր՝ Ազգն է, միահամուռ և ըստ